

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶՐՈՒՆՔԸ ՔԱՂԱՔԱԳՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Աշխեն Ղարսյան

*ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասիստենտ,
իրավաբանական գիտությունների թեկնածու*

Իրավական պետությունում պետական կարգավորման բոլոր ոլորտների հիմքում ընկած է օրինականության սկզբունքը՝ որպես համաիրավական բնույթի սկզբունք-մեթոդ, որը ենթադրում է իրավունքի համընդհանրություն, օրենքի գերակայություն, օրենքի առջև բոլորի հավասարություն, իրավունքների իրացման և պաշտպանության կառուցակարգերի առկայություն, իրավակարգի կայունություն: Որպես համընդհանուր բնույթ ունեցող սկզբունք՝ օրինականության սկզբունքը պահանջում է որակյալ, ոչ հակասական օրենսդրության առկայություն և օրենսդրական նորմերի անշեղ կատարում բոլոր հասցեատերերի՝ պետական իշխանության մարմինների, պաշտոնատար անձանց, քաղաքացիների և իրավաբանական անձանց կողմից: Այս կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ օրենքը պետք է լինի բավականաչափ մատչելի, նորմը կարող է որակվել որպես «օրենք», եթե այն բավականաչափ հստակ է, ինչը հնարավորություն է տալիս անձին համապատասխանեցնելու իր վարքագիծը և կանխատեսելու դրա հետևանքները¹: Այս դիրքորոշմանը համահունչ չէ սահմանադրական դատարանը ևս ամրագրել է, որ իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաև **իրավական օրենքի առկայություն**: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի. իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու, թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը²: Եթե նախկինում ընդունված էր օրինականության սկզբունքը դիտարկել բացառապես օրենքի գերակայության տեսանկյունից, ապա ժամանակակից իրավական զարգացումներին համահունչ այս սկզբունքը ենթադրում է նաև մարդու հիմնարար իրավունքների և օրինական շահերի ապահովման անհրաժեշտություն:

Ինչպես և մյուս համընդհանուր սկզբունքները, օրինականությունը ևս իրավունքի յուրաքանչյուր ճյուղի (այդ թվում նաև քաղաքացիական դատավարության իրավունքի) շրջանակներում ունի դրսևորման իր առանձնահատկությունները, ինչը պայմանավորված է իրավունքի տվյալ ճյուղի կարգավորման առարկայով և մեթոդներով, իրավունքի աղբյուրներով, իրավահարաբերության մասնակիցների հատուկ կազմով:

Իրավաբանական գրականության մեջ առավել լայն տարածում ունի այն տեսակետը, որ օրինականության սկզբունքը քաղաքացիական դատավարությունում հասցեագրված է ոչ միայն դատարանին, այլև դատավարության բոլոր մասնակից-

¹ St`u Sunday times v. The United Kingdom, 26/04/1979 թ. վճիռ, գանգատ թիվ 6538/74, կետ 49:

² St`u չչ սահմանադրական դատարանի 13.05.2008 թվականի թիվ ՍՊՈ-753 որոշում:

ներին և ենթադրում է ինչպես դատարանի կողմից գործերի քննության և լուծման ընթացքում օրենսդրության ճիշտ կիրառում, այնպես էլ դատավարության մյուս մասնակիցների կողմից նյութական և դատավարական նորմերի անշեղ պահպանում¹: Միաժամանակ իրավաբանական գրականությունում երկար ժամանակ տիրապետող էր այն մոտեցումը, որ օրինականության սկզբունքը դասվում է քաղաքացիական դատավարության գործառնության սկզբունքների շարքը: Վերջին շրջանում, սակայն, միջազգային-իրավական զարգացումներով պայմանավորված, առավել համոզիչ է այն մոտեցումը, որ օրինականության սկզբունքը քաղաքացիական դատավարությունում և՛ կազմակերպական-գործառնության, և՛ գործառնության սկզբունք է: Քննարկվող տեսակետը բխում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի ձևակերպումից, ըստ որի՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած մեղադրանքի առնչությամբ, ունի *օրենքի հիման վրա ստեղծված* անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: Ընդ որում, «ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը ևս սահմանում է, որ դատարանների գործունեությունը պետք է կազմակերպվի այնպես, որ ապահովվի յուրաքանչյուրի իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանությունը *օրենքի հիման վրա ստեղծված* անկախ և անաչառ դատարանի կողմից գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության միջոցով:

«Օրենքի հիման վրա ստեղծված լինելու պահանջը», ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայի, ենթադրում է, որ դատարանների կազմակերպումը և դրանց լիազորությունների շրջանակը պետք է նախատեսված լինեն օրենքով, այլ ոչ թե գործադիրի հայեցողությամբ: Այս բառակապակցությամբ նախատեսված մարմինը այն մարմինն է, որի գործառնությունն է՝ սահմանված կարգով անցկացված դատավարությունների արդյունքում՝ իր լիազորությունների սահմաններում, օրենքի գերակայության հիման վրա լուծել հարցը²: Այդ մարմինը պետք է պարտադիր որոշումներ կայացնելու իրավունք ունենա³: «Օրենքի հիման վրա ստեղծված լինելու պահանջը» պարունակում է նաև դատավորների նշանակման, դատական կազմերի ձևավորման կարգի պահպանման անհրաժեշտությունը⁴: Դատարանի որոշումն օրինական համարվել չի կարող, եթե դատավարությունն ընթացել է և դրա արդյունքում որոշում կայացվել է օրենքի խախտմամբ ստեղծված դատարանի կողմից: Այդ իսկ նկատառումով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 5-րդ կետերը սահմանում են, որ դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե դատարանը գործը քննել է ոչ օրինական կազմով, այդ թվում՝ այնպիսի դատավորի կողմից, որը պարտավոր էր ինքնաբացարկ հայտնել, կամ դատական ակտը կայացրել է այն դատավորը, որը տվյալ գործը քննող դատարանի կազմում ընդգրկված չէ: «ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 15-րդ հոդվածը՝ «Դատարանի կազմը և որոշումների ընդունումը» վերտառությամբ, սահմանում է, որ առաջին ատյանի դատարանում գործը քննվում է միանձնյա, իսկ գործը միանձնյա քննող դատավորը գործում է որպես դատարան: Հետևաբար «ոչ օրինական կազմ» արտահայտությունը կիրառելի է նաև առաջին ատյանի դատարանի վճռի բեկանման մասով: Մասնավորապես, «ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրեն-

¹ St`u Avdyukov M. G. Принцип законности в гражданском судопроизводстве. М., 1970, с. 14:

² St`u Belilos v. Switzerland, 29.04.1988թ. վճիռ, գանգատ 10328/83, կետ 64:

³ St`u Sramek v. Austria, 22.10.1984թ. վճիռ, գանգատ 8790/79, կետ 36:

⁴ St`u Posokhov v. Russia 04.06.2003թ. վճիռ, գանգատ 63486/00, կետ 39:

քի 112-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված են այն սահմանափակումները (*օրինակ՝ անձը դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը մարված կամ հանված չէ, անձը դատապարտվել է դիտավորյալ հանցագործության համար կամ ազատությունից զրկելու հետ կապված պատիժ է կրել՝ անկախ դատվածությունը մարված կամ հանված լինելու հանգամանքից, անձ ունի դատավորի պաշտոնում նշանակվելուն խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն և այլն*), որոնցից որևէ մեկի առկայության պայմաններում անձը չի կարող դատավոր նշանակվել, քանի որ այդպիսիք օբյեկտիվորեն կասկածներ են հարուցում նրա՝ որպես դատավորի լիազորությունները պատշաճ կարգով իրականացնելու առումով: Հետևաբար այն դեպքում, երբ գործը քննվել և դատական ակտը կայացվել է «ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 112-րդ հոդվածի 1-ին մասի խախտմամբ նշանակված դատավորի կողմից, ապա կարող ենք արձանագրել օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից գործի քննության իրավունքի, արդյունքում նաև՝ օրինականության սկզբունքի խախտում:

Օրինականությունը՝ որպես քաղաքացիական դատավարության գործառնության սկզբունք, բաղկացած է իրավակիրառ և իրավաիրացնող տարրերից: Օրինականության սկզբունքի իրավակիրառ տարրը պահանջում է, որ դատարանի՝ որպես արդարադատություն իրականացնող մարմնի բոլոր գործողությունները, նրա կայացրած բոլոր դատական ակտերը համապատասխանեն ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքի նորմերին՝ հետևյալ ելակետային դրույթների հաշվառմամբ՝

ա) հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք (ՀՀ Սահմ., հոդվ. 3-րդ),

բ) Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ (ՀՀ Սահմ., հոդվ. 5-րդ),

գ) օրենքները պետք է համապատասխանեն սահմանադրական օրենքներին, իսկ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը՝ սահմանադրական օրենքներին և օրենքներին (ՀՀ Սահմ., հոդվ. 5-րդ),

դ) Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը (ՀՀ Սահմ., հոդվ. 5-րդ),

ե) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով (ՀՀ Սահմ., հոդվ. 6-րդ),

զ) օրենքները և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում օրենքով սահմանված կարգով հրապարակվելուց հետո (ՀՀ Սահմ., հոդվ. 6-րդ):

Օրինականության սկզբունքը և նրա երաշխիքներն ամրագրված են և՛ «ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի, և՛ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի մի շարք դրույթներում: Այսպես, «ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ դատարանը գործը կամ հարցը քննում և լուծում է *Սահմանադրությանը և օրենքին համապատասխան*՝ գործի հանգամանքները գնահատելով իր ներքին համոզմամբ: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասն էլ ամրագրում է, որ դատական ակտը պետք է լինի **օրինական**, իսկ դատական ակտն **օրինական** է, եթե այն կայացվել է Սահմանադրության, սահմանադրական օրենքների, Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի, այլ օրենքների և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանմամբ, որոնց նորմերը կիրառելի են տվյալ գործը քննելիս և լուծելիս:

Նյութական օրենսդրության նորմերի ճիշտ կիրառման տեսանկյունից ուղենիշային նշանակությունի ունի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի կարգավորումը, որը սահմանում է քաղաքացիական գործերը քննելիս դատարանի կողմից կիրառվող իրավունքը: Մասնավորապես, օրենսդիրը հստակ սահմանել է վիճելի հարաբերությունը կարգավորող նյութաիրավական օրենքի կամ այլ իրավական ակտի բացակայության դեպքում նույնանման հարաբերություններ կարգավորող օրենքի նորմերի (օրենքի անալոգիա), իսկ նման նորմերի բացակայության դեպքում՝ իրավունքի անալոգիա կիրառելու հնարավորությունը: Դատարանն իրավասու է օրենքով նախատեսված դեպքերում կիրառել է նաև գործարար շրջանառության սովորույթներ, որոնց առկայությունն ապացուցելու պարտականությունը կրում է այն վկայակոչող՝ գործին մասնակցող անձը¹:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն ուղղակիորեն թույլ է տալիս դատարանին Սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրին կամ օրենքին համապատասխան կիրառել նաև այլ պետությունների իրավունքի նորմեր (երկուստեք՝ և՛ նյութական, և՛ դատավարական), սակայն որոշակի պայմաններով. դատարանն օտարերկրյա իրավունք կիրառելու անհրաժեշտության դեպքում պետք է պարզի դրա նորմերի գոյությունը և բովանդակությունը՝ օտարերկրյա պետությունում դրանց մեկնաբանման և կիրառման պրակտիկային համապատասխան, ընդ որում՝ դատարանն իրավունք ունի կողմերից պահանջելու հիմնավորում օտարերկրյա իրավունքի նորմերի գոյությունը և բովանդակությունը պարզելու նպատակով: Օտարերկրյա իրավունքի նորմերի բացակայության դեպքում դատարանը կիրառում է Հայաստանի Հանրապետության իրավունքի համապատասխան նորմերը:

Օրինականության սկզբունքի ապահովման տեսանկյունից երաշխիքային նշանակություն ունի նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթը, ըստ որի՝ դատարանն իր վարույթում գտնվող գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարցով դիմում է Սահմանադրական դատարան, եթե առկա է հիմնավոր կասկած դրա սահմանադրականության վերաբերյալ, և գտնում է, որ տվյալ գործի լուծումը հնարավոր է միայն այդ նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով: Եթե դատարանը վճռի հիմքում դրել է ՀՀ Սահմանադրությանը հակասող օրենք կամ օրենքի նորմը մեկնաբանել է դրա սահմանադրաիրավական բովանդակությանը հակառակ, ապա կարող է արձանագրվել դատական սխալի առկայությունը՝ նյութական կամ դատավարական նորմի խախտումը, որն ազդել է գործի ելքի վրա:

Դատավարական նորմերի կիրառման առումով պետք է նկատի ունենալ, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն ուղղակիորեն արգելում է դատավարական նորմերի՝ օրենքի անալոգիայով կիրառումը, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ դատական գործերի քննության և լուծման կարգը պետք է նախապես, ճշգրիտ և սպառիչ կերպով սահմանված լինի դատավարության իրավունքի նորմերով: Դատավարությունում թույլատրելի են միայն օրենքով սահմանված և դատավարական ձևի շրջանակներից դուրս չեկող գործողություններ, իսկ դրանք պետք է կատարվեն դարձյալ օրենքով խստորեն սահմանված կարգով: Օրինականության սկզբունքի ապահովման տեսանկյունից որոշակիորեն խնդրահարույց են այն դատավարական նորմերը, որոնք առանձին դատավարական գործողությունների իրականացման հնարավորությունը թողնում են դատարանի հայեցող-

¹ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը թեև թույլ է տալիս դատարանին օրենքով նախատեսված դեպքերում կիրառել գործարար շրջանառության սովորույթներ, սակայն օրենսգրքի 364-րդ հոդվածում, բացահայտելով նյութական իրավունքի նորմի խախտումը կամ սխալ կիրառումը, որպես այդպիսին չի դիտել գործարար շրջանառության սովորույթի սխալ կիրառումը:

ղությանը (օրինակ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը, հաշվի առնելով գործին մասնակցող անձի գույքային դրությունը, կարող է եզրափակիչ դատական ակտով նրան ազատել Հայաստանի Հանրապետության կողմից վկաներին, փորձագետներին, մասնագետներին և թարգմանիչներին վճարված գումարների և դատարանի կրած դատական ծախսերի փոխհատուցման պարտականությունից, կամ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անհրաժեշտության դեպքում դատարանը կարող է կիրառել հայցի ապահովման մի քանի միջոց):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, որոշելով իրավունքների պաշտպանության և պետության հայեցողական լիազորությունների սահմանները, նշել է, որ պայմանավորվող պետություններն անհրաժեշտ միջամտության առկայությունը և սահմանները որոշելիս օժտված են հայեցողության որոշակի ազատությամբ, որը, սակայն, պետք է անխզելիորեն պայմանավորված լինի եվրոպական հսկողությամբ՝ միաժամանակ ներառելով օրենքների և անկախ դատարանների կայացրած իրավակիրառ ակտերի նկատմամբ հսկողությունը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի խնդիրն է պարզել, թե ազգային իրավունքի մակարդակում դատական հայեցողության դրսևորումն արդարացված է, թե՞ ոչ և որքանով է համապատասխանում մարդու իրավունքների գերակայության սկզբունքին¹:

Այս կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանը ևս գործերից մեկով կայացրած որոշման շրջանակներում արձանագրել է, որ պետախիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնի, այդ թվում՝ դատարանին, իր գործառական կարգավիճակին համապատասխան, օրենքով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ: «Հայեցողությունը» թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրության կամ դրսևորման հնարավորությունն է: Որպես ուղենիշ հիմք ընդունելով իրավունքի գերակայության սկզբունքը, մարդու և քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության գաղափարը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ «հայեցողություն» եզրույթի ներքո պետք է նկատի ունենալ նպատակահարմարության և օրինականության ողջամիտ հարաբերակցություն: Այսինքն՝ պետախիշխանական լիազորություններով օժտված որևէ պետական մարմին հայեցողական լիազորություն իրականացնելիս պարտավոր է թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրությունն իրականացնել՝ առաջնորդվելով մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, կամայականության արգելքի սկզբունքներով՝ ապահովելով գործի ըստ էության ճիշտ քննությունը և լուծումը: ՀՀ վճռաբեկ դատարանի բնորոշմամբ՝ «դատական հայեցողությունը» կոնկրետ իրավական վեճի լուծման գործընթացում օրենսդրությամբ կանխորոշված շրջանակներում դատարանի կողմից որոշակի դատավարական գործողության կատարման կամ այդպիսի գործողության կատարումից ձեռնպահ մնալու հնարավորությունն է: «Դատական հայեցողությունը», սակայն, չի կարող մեկնաբանվել որպես անսահմանափակ ազատություն: Իրավական պետության հիմքում ընկած իրավունքի գերակայության սկզբունքը պահանջում է, որ երաշխավորվի կամայականության արգելքը, և հստակեցված լինեն հանրային իշխանության մարմինների հայեցողության սահմանները: Ըստ այդմ «դատական հայեցողության» սահմանները նախևառաջ պայմանավորված են գործի փաստական հանգամանքները լրիվ և բազմակողմանի պարզելու, կողմերի իրավահավասարության և մրցակցության սկզբունքներն ապահովելու անհրաժեշտությամբ, միաժամանակ պայմանավորված են վիճելի իրավահարաբերության բնույթով և տվյալ իրավահարաբե-

¹ St' u **Микеле де Сальвиа**. Прецеденты Европейского Суда по правам человека. СПб., 2004, էջ 48:

րությունը կարգավորող նյութաիրավական օրենսդրության առանձնահատկություններով¹:

Ընդհանրացնելով վերը շարադրված իրավական դիրքորոշումները՝ պետք է նշել, որ դատական հայեցողությունն իրավակիրառ գործունեության հատուկ տեսակ է, որը պետք է համապատասխանի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքի տարրերին, հետևաբար յուրաքանչյուր դեպքում օրինականության սկզբունքի պահպանված լինելու հարցն այս տեսանկյունից քննարկելիս առաջնահերթ պետք է պարզել, թե որքանով է դատարանի հայեցողությունը բխել դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների ապահովման անհրաժեշտությունից:

Օրինականության սկզբունքի ապահովման համար երաշխիքային նշանակություն ունեն «Քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված դատական ակտի բողոքարկման և բեկանման հիմքերը: Մասնավորապես, «Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 363-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ դատական ակտի բողոքարկման հիմքերն են՝ նյութական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը և դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը: Ընդ որում, նյութական իրավունքի նորմի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է գործի սխալ լուծման («Քաղ. դատ. օր., 364-րդ հոդվ., 2-րդ մաս), իսկ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը դատական ակտի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման: Դատարանի ըստ էության ճիշտ դատական ակտը չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով («Քաղ. դատ. օր., 365-րդ հոդվ., 1-ին մաս): Փաստորեն օրենսդիրը, դատական սխալը՝ որպես օրինականության սկզբունքի խախտման դրսևորում, դիտելով որպես դատական ակտի բեկանման հիմք, միաժամանակ հնարավոր է համարում օրենքի խախտմամբ կայացված դատական ակտերի գոյությունը, եթե դատական սխալը չի հանգեցրել գործի սխալ լուծման: Այս կապակցությամբ, սակայն, իրավաբանական գրականության մեջ առկա են տարբեր տեսակետներ: Այսպես, Ն. Վ. Կուզնեցովը, քննադատելով Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական դատավարության օրենսգրքի հայրենական օրենսդրության վերը նշված իրավակարգավորումներին համահունչ կարգավորումը, գտնում է, որ այն հարիր չէ իրավական պետությանը, վնասում է քաղաքացիական դատավարության մասնակիցների իրավագիտակցությունը. եթե օրենսդիրն ամրագրում է օրենքի խախտման հնարավորությունը և որևէ իրավական հետևանք չի նախատեսում այդ խախտման համար, արդյունքում իրավունքի հասցեատերերի մոտ ձևավորվում է իրավական նիհիլիզմ²: Որոշ հեղինակներ էլ գտնում են, որ դատավարական իրավունքի նորմի յուրաքանչյուր խախտում, քաղաքացիական գործի քննության կոնկրետ հանգամանքից կամ դատավարության ընթացքում ստեղծված իրավիճակից ելնելով, կարող է ազդել վճռի ճշտության վրա³:

Վ. Վ. Հովհաննիսյանի կարծիքով՝ վկայակոչված իրավակարգավորումները «օրինական» և «իրավական» վճիռների տարանջատման լավագույն դրսևորումն են: Օրենքն արգելում է վճռի էության վրա չազդող ֆորմալ դատավարական կանոնների խախտմամբ կայացված գործը ճիշտ լուծող դատական ակտերի բեկա-

¹ «Վճռաբեկ դատարանի թիվ ԵՇԴ/3780/02/14 քաղաքացիական գործով 27.11.2015թ. որոշումը:

² Տե՛ս Կузнєцов Н. В. О принципе законности в гражданском судопроизводстве // Тенденции развития цивилистического процессуального законодательства и судопроизводства в современной России. Саратов, 2009, էջ 271:

³ Տե՛ս Лєсницкая Л. Ф. Пересмотр решения суда в кассационном порядке. М., 1974, էջ 169-170:

նում (օրինակ՝ դատարանը խախտել է գործի քննության ողջամիտ ժամկետները): Ստացվում է, որ գործի քննության ընթացքում թույլ են տրվել դատավարական կանոնների ֆորմալ խախտումներ, սակայն վճիռը հանդիսանում է իրավական, քանի որ դատարանը ճիշտ է պարզել վիճելի իրավահարաբերության բնույթը և գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի շրջանակը, դրանք հաստատել է դատական նիստում անմիջականորեն հետազոտված թույլատրելի ապացույցներով, բացահայտված փաստերի նկատմամբ ճիշտ է կիրառել իրավունքի նորմերը, իր կողմից հաստատված հանգամանքներից ճիշտ եզրահանգումներ է արել: Ըստ հեղինակի՝ դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտումները, որոնք չեն ազդել գործի ելքի վրա, կարող են դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք դառնալ¹: Հեղինակի այս մոտեցումը լիովին արդարացված է և համապատասխանում է օրինականության սկզբունքի ժամանակակից իրավական ընկալմանն այն առումով, որ առաջնահերթ պետք է ապահովել մարդու հիմնարար իրավունքները և օրինական շահերը, իսկ այս տեսանկյունից երկարաձգել որևէ դատավարություն, որն ըստ էության իրավական ճիշտ հանգուցալուծում է ստացել, անկախ թույլ տրված ֆորմալ խախտումներից, չի բխում արդարադատության արդյունավետությունից, որը նաև ենթադրում է, որ իրավական պաշտպանության միջոցները պետք էլ լինեն տեղին ու ժամանակին:

Օրինականության սկզբունքի իրավահրացնող տարրը դրսևորվում է քաղաքացիական դատավարության մյուս մասնակիցների գործողություններում իրենց սուբյեկտիվ իրավունքներն իրականացնելիս: Այս տեսանկյունից օրինականության սկզբունքի իրացմանը նպաստող երաշխիքներ են՝ քաղաքացիական գործ հարուցելու կարգը, գործի քննության ժամանակի և տեղի մասին շահագրգռված անձանց ծանուցելու դատարանի պարտականությունը, հայցադիմումին (դիմումին) ներկայացվող վավերապայմանները, հայցադիմումը վերադարձնելու կամ դրա ընդունում մերժելու հիմքերի սպառիչ շրջանակը, դատական նիստը վարելու օրենքով սահմանված կարգը, ապացույցների սպառիչ շրջանակը և այլ դատավարական ընթացակարգեր:

Անհուփելիով պետք է նշել, որ օրինականության սկզբունքը քաղաքացիական դատավարության և՛ կազմակերպական, և՛ գործառության սկզբունք է, որի էությունն այն է, որ արդարադատությունը պետք է իրականացվի օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից և պետք է ընթանա դատարանի և դատավարության մյուս մասնակիցների կողմից նյութական ու դատավարական իրավունքի նորմերի պահանջների պահպանմամբ:

¹ Տե՛ս Վ. Վ. Հովհաննիսյան, Վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, Երևան, ԵՊՀ հրատ., 2013, էջեր 406-407:

ПРИНЦИП ЗАКОННОСТИ В ГРАЖДАНСКОМ СУДОПРОИЗВОДСТВЕ

Ашхен Карслян

*Ассистент кафедры гражданского процесса ЕГУ,
кандидат юридических наук*

В данной статье автор рассматривает особенности проявления принципа законности в гражданском судопроизводстве. В частности, автор рассматривает указанный принцип в качестве как организационно-функционального, так и функционального принципа гражданского судопроизводства. В результате проведенного исследования автор пришел к выводу, что суть принципа законности заключается в том, что правосудие должно осуществляться судом, созданным на основе закона, и с соблюдением требований норм материального и процессуального права судом и другими участниками судебного процесса.

THE PRINCIPLE OF LEGALITY IN CIVIL PROCEEDINGS

Ashkhen Gharslyan

*Assistant at the YSU Chair of Civic Procedure,
Candidate of Legal Sciences*

In this article the author examines the features of the manifestation of the principle of legality in civil proceedings. In particular, the author considered this principle as both the organizational-functional and functional principle of civil proceedings. As a result of the study, the author came to the conclusion that the essence of the principle of legality is that justice should be administered by a court created on the basis of the law, and should be conducted in compliance with the requirements of substantive and procedural law by the court and other participants in the trial.

Բանալի բառեր – օրինականություն, սկզբունք, օրենքի հիման վրա ստեղծված դատարան, իրավական նորմ, մարդու իրավունքներ և ազատություններ, նորմատիվ իրավական ակտեր

Ключевые слова: законность, принцип, суд, созданный на основе закона, правовая норма, права и свободы человека, нормативные правовые акты

Key words: legality, principle, court, created on the basis of the law, legal norm, human rights and freedoms, normative legal acts